



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/122/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

5 մայիսի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարությանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի մայիսի 5-ին քննելով Հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության վարչության կամերալ ուսումնասիրությունների բաժնի գլխավոր հարկային տեսուչ՝ Լիանա Մովսիսյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/122/2025 գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով infocom.am կայքում 2024 թվականի հոկտեմբերի 23-ի «Հարկային և մաքսային տեսուչների ստացած նվիրատվությունները հետազոտելի չեն. ԿԿՀ-ն նրանց հայտարարագրերը չի ուսումնասիրել» վերտառությամբ հրապարակումը, իրականացրել է Հարկային տեղեկատվության և ռիսկերին

վերլուծության վարչության կամերալ ուսումնասիրությունների բաժնի գլխավոր հարկային տեսուչ՝ Լիանա Մովսիսյանի և նրա ընտանիքի անդամ՝ Սամվել Եղիազարյանի կողմից Հանձնաժողով ներկայացված 2023 թվականի տարեկան հայտարարագրերում հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, որի արդյունքում պարզվել է հետևյալը՝

Լիանա Մովսիսյանի՝ 2023 թվականի տարեկան հայտարարագրի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում, ի թիվս այլ եկամուտների, հայտարարագրված է Սամվել Եղիազարյանից ստացված՝ 30,000 եվրոյի չափով նվիրատվություն, հայտարարատուի և եկամուտ վճարողի միջև առկա կապի բնույթը նշված է՝ ամուսին, մինչդեռ Սամվել Եղիազարյանի 2023 թվականի տարեկան հայտարարագրի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում տվյալներ հայտարարագրված չեն, իսկ նույն հայտարարագրի՝ տարեսկզբի և տարեվերջի դրությամբ հայտարարագրված դրամական միջոցների տարբերությունը կազմում է ընդամենը 10,000 եվրո և 500,000 ՀՀ դրամ, ինչը նշանակում է, որ Սամվել Եղիազարյանի կողմից հայտարարագրված եկամուտները և դրամական միջոցները չէին կարող բավարար լինել Լիանա Մովսիսյանին 30,000 եվրոյի չափով նվիրատվություն կատարելու համար:

Նշվածով պայմանավորված Հանձնաժողովը 2025 թվականի ապրիլի 1-ին Սամվել Եղիազարյանի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի ընթացքում հաստատվել է, որ Լիանա Մովսիսյանի՝ 2023 թվականի տարեկան հայտարարագրում 30,000 եվրոյի չափով նվիրատվության որպես եկամուտ վճարողի վերաբերյալ ենթակա են եղել հայտարարագրման Լիանա Մովսիսյանի սկեսրոջ՝ Սարգիս Հարությունի Եղիազարյանի տվյալները:

Հանձնաժողովը վերը նշված տվյալի հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի ապրիլի 18-ին Լիանա Մովսիսյանին հասցեագրել է թիվ 01/1530-2025 գրությունը, հրավիրելով Հանձնաժողով նշված գրությունը ստանալուց հետո 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ գրությունը ստանալուց հետո 5-րդ աշխատանքային օրը

Ժամը՝ 15:00-ին գործի քննությանը մասնակցելու: Նշված գրությունը Լիանա Մովսիսյանը ստացել է 2025 թվականի ապրիլի 22-ին՝ դրա մասին հավաստումն ուղարկելով Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին, միաժամանակ ներկայացրել է միջնորդություն արձանագրության կազմման և գործի քննության օրը տեղափոխելու վերաբերյալ, որը բավարարվել է:

1.3 2025 թվականի մայիսի 2-ին պատշաճ ծանուցված Լիանա Մովսիսյանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 70/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Լիանա Մովսիսյանի բացակայությամբ 2025 թվականի մայիսի 5-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթի մասնակից Լիանա Մովսիսյանի կողմից ներկայացված պարզաբանման համաձայն իր և ամուսնու՝ Սամվել Եղիազարյանի հայտարարագրերը լրացվել են իր կողմից: Հայտարարագրի լրացման կարգին չի տիրապետել, այդ իսկ պատճառով տվյալները հայտարարագրվել են թերություններով: Լիանա Մովսիսյանի կողմից Հանձնաժողովին ներկայացրած բացատրության համաձայն իր՝ 2023 թվականի հայտարարագրում որպես նվիրատվություն հայտարարագրված 30,000 եվրոյի չափով գումարը վճարող անձի վերաբերյալ հայտարարագրել է սխալ տվյալ, քանի որ նշված նվիրատվությունն ինքը իրականում ստացել է ամուսնու՝ Սամվել Եղիազարյանի հոր կողմից, որը նշված գումարը կանխիկ ձևով փոխանցել է Լիանա Մովսիսյանին որդու միջոցով, վերջիններիս կողմից ձեռք բերված անշարժ գույքի արժեքի մի մասի վճարման նպատակով: Լիանա Մովսիսյանը նաև նշել է, որ իր կողմից որևէ տվյալ չհայտարարագրելու նպատակ չի հետապնդվել, հայտարարագրում որպես եկամուտը վճարող անձի վերաբերյալ սխալ տվյալի հայտարարագրմամբ որևէ դիտավորություն չի ունեցել: Լիանա Մովսիսյանը նաև նշել է, որ

ամուսնու հայրը չի հանդիսանում հայտարարատու անձ, նշված գումարը վերջինս ստացել է սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույքի վաճառքից:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/122/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Լիանա Մովսիսյանը 2023 թվականի սեպտեմբերի 13-ից մինչ օրս զբաղեցնում է հարկային տեղեկատվության և ռիսկերին վերլուծության վարչության կամերալ ուսումնասիրությունների բաժնի գլխավոր հարկային տեսուչի պաշտոնը:

3.2 ՀՀ ԱՆ ՔԿԱԳ շտեմարանի տվյալների, ինչպես նաև հայտարարագրված տվյալների համաձայն՝ Սամվել Եղիազարյանը հանդիսանում է հայտարարատու պաշտոնատար անձ՝ Լիանա Մովսիսյանի ամուսինը:

3.3 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ Լիանա Մովսիսյանը և Սամվել Եղիազարյանը հանդիսանում են գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.4 Լիանա Մովսիսյանը 2023 թվականի պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում որպես նվիրատվություն հայտարարագրել է 30,000 եվրոյի չափով գումար և որպես եկամուտը վճարող անձ նշել է Սամվել Եղիազարյանին, հայտարարատուի և եկամուտ վճարողի միջև առկա կապի բնույթը՝ ամուսին, մինչդեռ նշված նվիրատվությունը Սամվել Եղիազարյանի գույքի փոփոխությամբ չէր հիմնավորվում:

3.5 Գործի քննության ընթացքում Լիանա Մովսիսյանի կողմից ներկայացված պարզաբանման համաձայն վերջինիս 30.000 եվրո գումարի չափով նվիրատվություն կատարած/վճարած անձը հանդիսացել է ոչ թե ամուսինը՝ Սամվել Եղիազարյանը, այլ նրա հայրը՝ Սարգիս Եղիազարյանը:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենք 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են պետական (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար:

4.3 Օրենքի 41-րդ հոդվածի (Եկամուտների հայտարարագրի բովանդակությունը) 4-րդ մասի 8-րդ կետի համաձայն հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը, դրամական միջոցները (բացառությամբ աշխատանքի, ծառայության տեսքով ստացված):

4.4 Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն եկամուտը հայտարարագրելիս նշվում են՝

1) եկամտի տեսակը.

2) եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն, եկամուտ վճարողի և նրանց միջև առկա կապի բնույթի մասին տեղեկատվություն.

3) եկամտի չափը (գումարը).

4) եկամտի արժույթը:

4.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական

իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.11 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք

կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս սխալ կամ ոչ ամբողջական տվյալների ներկայացման արարք:

Հանձնաժողովը գտնում է, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Սույն դեպքում, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ է հետապնդում հանրության համար բացահայտել պաշտոնատար անձի գույքային դրության վերաբերյալ տվյալները, որը, տվյալ դեպքում խաթարվել է Լիանա Մովսիսյանի կողմից, հայտարարագրման ենթակա համապատասխան տվյալը Հայտարարագրում սխալ ներկայացնելու արդյունքում:

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի նպատակն է ապահովել հայտարարատու անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Սույն գործով հաստատված փաստական տվյալների համաձայն՝ Լիանա Մովսիսյանը իր 2023 թվականի պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում որպես նվիրատվություն հայտարարագրած 30,000 եվրոյի չափով գումարը (եկամուտը) վճարող անձի վերաբերյալ հայտարարագրել է սխալ տվյալ, այն է՝ որպես եկամուտը վճարող անձի տվյալներ նշել է՝ Սամվել Եղիազարյանին: Միաժամանակ նշված նվիրատվության կատարումը չի հիմնավորվել Սամվել Եղիազարյանի 2023 թվականի պաշտոնատար անձի ընտանիքի անդամի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրում հայտարարագրված եկամուտներով, ինչպես նաև տարեսկզբին և տարեվերջի առկա կանխիկ դրամական միջոցներով:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ դեպքում հայտարարատու պաշտոնատար անձի կողմից որպես նվիրատվություն հայտարարագրած 30,000 եվրոյի չափով գումարը (եկամուտը) վճարող անձի վերաբերյալ տվյալների սխալ հայտարարագրումն ունի էական նշանակություն հայտարարատու պաշտոնատար անձի և վերջինիս ընտանիքի անդամի գույքային դրության բացահայտման տեսանկյունից: Հայտարարատու պաշտոնատար անձի կողմից հայտարարագրման ենթակա տվյալի՝ եկամուտը վճարողի տվյալների ճիշտ հայտարարագրումն Օրենքի ձևական պահանջ չէ, այլ Օրենքով պահանջվող տվյալ, որի միջոցով ապահովվում է հայտարարատու պաշտոնատար անձի հանրային վերահսկողության տեսանկյունից հանրային հաշվետվողականությունը, տվյալ դեպքում նաև պաշտոնատար անձի և վերջինիս ընտանիքի անդամի գույքային

դրության բացահայտման հնարավորությունը, ինչը վտանգում է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով պահպանվող հասարական շահը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Լիանա Մովսիսյանը ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի համար:

Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի է առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ամփոփելով վերոնշյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության վարչության կամերալ ուսումնասիրությունների բաժնի գլխավոր հարկային տեսուչ՝ Լիանա Մովսիսյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի «նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիանա Մովսիսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Լիանա Մովսիսյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՅԱՆ